



ԱՌԱՔԵԼ ԱՌԱՔԵԼՅԱՆ

(Գերագույն հոգևոր խորհրդի անդամ)

Մ Ե Ծ Կ Ո Մ Ի Տ Ա Ս Ը

Հին հույներն ունեին իրենց մեծահանձար հնագույն երգիչը, որին անվանում էին Օլիփեոս: Հունական առասպելաբանությունը զարդարել է Օրփեոսի հանձարը. մի գեղեցիկ առասպելով, որ ասել է՝ երբ երգում է Օրփեոսը, նրա երգերը մեղմացնում են վայրի գազաններին և ոգեշնչում ծառերին:

Հայն էլ ունեցավ իր Օրփեոսը: Նրա նվիրական անունն է Կոմիտաս:

Հին Հունաստանի շնորհալի երգիչ Ալկմանը շրջեց հայրենի երկրի գյուղերն ու քաղաքները, ժողովեց ժողովրդական երկու հազար երգ, հղկեց այն, մշակեց ու տվավ հունական ժողովրդին, որից ստացել էր նա:

Հայոց աշխարհը կյանքի կոչեց հայ Ալկմանին, որի անունն է սրբաուրբ Կոմիտաս:

Ու հայ Ալկմանը շրջեց հայրենի գյուղերը, մտավ մթնում կորած խրճիթները, տեսավ անհրապույր սև պատերը խրճիթների, ունկընդրեց շինականի երգերին: Եվ նրա հոգին վառվեց շինականի անմահական ստեղծագործությամբ, բոցակիզվեց այդ երգերի երկնառաք թուփչությամբ: Կոմիտասյան հանձարը թափանցեց շինականի երգերի անհատնում խորքը, ընկալավ նրանց ոգին ու շունչը և առավել իմաստավորեց, պայծառացրեց և իբրև տաղ երկնարժան նույն շինականին վերընծայեց:

Դեռ պատանի էր նա՝ հայ Օրփեոսը, երբ իր թուփչ ձայնով շարժեց ծերունագարդ Գեվորգ Դ կաթողիկոսի՝ ճեմարանի հիմնադրի սիրտը և արցունքներ քամեց նրա աչքերից: Ու հայ Ալկմանը՝ փոքրիկ Սողոմոնը, մտավ կաթողիկոսի հիմնադրած ճեմարանը, այստեղ աճեց ու ուռճացավ նրա գերիմաստ

հանձարը, որ ի սպաս դրեց իր հարազատ ժողովրդին:

Սակայն Գևորգյան ճեմարանը չէր կարող բավարարել մեծ գեղագետի ստեղծագործական պահանջը: Մայր Աթոռը ընդատաչեց Գևորգյան ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանին, և վերջինիս խնդրելով Կոմիտասը գործուղվեց Գերմանիա՝ կատարելագործելու և առավել զարգացնելու իր երաժշտական բնատուր տաղանդը: Կոմիտաս վարդապետը եռանդով ուսումնասիրում է եվրոպական մեներգության արվեստը «ճեմարանական խմբի ձայները կրթելու և կուկելու» նպատակով: Այդ է վկայում ճեմարանի տեսուչ Կ. Կոստանյանին հիշած իր նամակը, որտեղ գրում է. «Ժամանակից օգուտ քաղելով, կամեցա և մի այլ թերի կողմս լրացնել. երկու շաբաթից ի վեր առնում եմ և երգեցողության ու ձայնագրության դասեր, որ անհրաժեշտ է խմբական երգեցողության և առհասարակ ճեմարանական խմբի ձայները կրթելու և կուկելու համար»:

Կոմիտասը Բեռլինում լիովին հագուրդ տվավ երաժշտական գիտության անհազ ծարավին, վերադարձավ ճեմարան և անձնատուր եղավ իր նվիրական աշխատանքին: Գևորգյան ճեմարանը դարձավ մեծ արվեստագետի աշխատանոցը, իսկ անդադրում, մեղվաջան աշխատանքը ճեմարանում՝ նրա պրպտող հոգու անդորրը և հանգստությունը: Սիրում էր նա այդ հաստատությունը և նրա սաներին ջերմ սիրով. ուրիշ աշխարհ, ուրիշ մխիթարություն և հանույք նա չունեի, քան նվիրական աշխատանքը ճեմարանում և դաստիարակություն-

նը մատաղ սերնդի նույն ճեմարանում: Մայր Աթոռը և Գևորգյան ճեմարանը լիցք տվին նրան, այնտեղ արգասավորվեց, ուռճացավ մեծ արվեստագետի հանճարը և ստեղծեց քաղցրահնչյուն, խորապես հուզական, նըր-

Մանուկ Աբեղյանը և Կոմիտասը: Աբեղյանը կարդում է իր բանք ձայնով, Կոմիտասը երգում է քաղցրաձայն՝ «Մհեն՛ր, Մհեն՛ր», և դահլիճն արձագանքում էր՝ «Մհեն՛ր, Մհեն՛ր»: Կոմիտասը ճեմարանում հորինեց հուչակա-



Գևորգյան ճեմարանը

բակերտ և քնքուշ մեղեդիները, ինչպես բնորոշել է նրա ստեղծագործությունները Սորբոնի համալսարանի պրոֆեսորը: Վիթխարի է Կոմիտասի ստեղծագործական աշխատանքը Էջմիածնում և Գևորգյան ճեմարանում: Նրա պրպտող միտքը առաջինը սեփեռեց ժողովրդական գոհար երգերի վրա: Նա շրջեց հայ գյուղերը, ժողովեց հայ շինականի հազարավոր երգերը և առաջինը հրապարակեց մեծ հայագետ Մանուկ Աբեղյանի հետ «Հազար ու մի խաղ» վերնագրով և հավերժական կորստից փրկեց հայ ժողովրդական գոհարները:

Կոմիտասը առաջինը կազմակերպեց Մանուկ Աբեղյանի հետ հանդիսավոր երեկույթ՝ նվիրված «Սասունցի Դավիթ» հայ մեծ էպոսին: Հիշում եմ այդ նվիրական երեկուն: Ճեմարանի դահլիճը հրավստոված է: Խրիմյանը բազմած է իր գահին: Նրա աջ և ձախ կողմում շարքով նստած են Էջմիածնի միաբանները: Դրանց դիմաց, փոքր-ինչ հեռու, դրված է ամբիոնը: Այդտեղ կանգնած են

վոր «Սիսիանա քաջեր» խմբերգը, որը կարելի է անվանել նրա գլուխ-գործոցը: Դա քայլերգ է, որի բառերը հորինել է Մ. Աբեղյանը, իսկ երգը՝ Կոմիտասը: Կոմիտասի առաջին հրապարակական երույթը տեղի ունեցավ 1890 թվականի սեպտեմբերի վերջերին, ճեմարանի 25-ամյա տարեդարձին: Այդ օրը պատարագից հետո ճեմարանի հյուսիսային բակում խուռն բազմության առաջ ճեմարանի տեսուչ Կարապետ Կոստանյանը կարդում է զեկուցում՝ ճեմարանի անցյալ ուսումնական տարվա աշխատանքների մասին: Զեկուցումից հետո տեղի է ունենում համերգ Կոմիտասի ղեկավարությամբ: Խումբը կազմված էր ճեմարանի աշակերտներից: Ժողովուրդը, ուխտավորներ Անդրկովկասի բոլոր տեղերից, շրջապատել էր երգչախումբին, դիտում էր Կոմիտասին և հափշտակված ունկնդրում խմբին: Քառաձայն էր խումբը՝ քաղկացած միայն տղաներից: Երգում էինք Կոմիտասի սովորեցրած երգերը՝ «Գարուն ա, ձյուն ա արել», «Հով արե՛ք,

սարեր ջան», «Հարբան», «Քելեր, ցոլեր» և այլն: Յուրաքանչյուր երգից հետո ժողովուրդը իր հիացմունքն էր արտահայտում բուն ծափահարություններով:

Ուսումնական տարին սկսված էր: Կոմիտասը հանգիստ չունի. ցերեկը պարապում է ճեմարանում որպես դասատու, ճաշից հետո նույն ճեմարանում պարապում է քառաձայն խմբի հետ, սովորեցնում է աշխարհիկ և պատարագի երգերը, իսկ երեկոյան, մինչեւ ուշ գիշեր, իր տանը կատարում է ստեղծագործական աշխատանք: Նա հանգիստ չունի և կիրակի օրերը: Պատարագի ժամանակ ղեկավարում է երգեցիկ խմբին և երգում հավուր պատշաճի մեղեդիներ՝ «Հափիկ», «Աչքն ծով ի ծով» և ուրիշը: Եվ այսպես տարիներ շարունակ և՛ կիրակի օրերին, և՛ տոն օրերին, տարվա բոլոր ժամանակներին: Առավել դյուրօշ էին և արտահույզ «Ո՛վ գարմանայի» և «Պարզևատուն ամենեցուն» ու «Տիրամայրն» մեղեդիները, որոնցից առաջինը երգվում էր ջրօրհների տոնին, իսկ վերջին երկուսը՝ Զատիկի շաբաօրին:

Կոմիտասը ճեմարանում դասավանդում է երաժշտություն: Նա մտցրեց եվրոպական նոտաները գործադրության մեջ, որ չկար էջմիածնում, որովհետև շարականները և եկեղեցական երգերը տպագրված էին հայկական նոտաներով: Նա մեզ սովորեցնում էր նաև այդ նոտաներով գրված եկեղեցական երգերը: Դասերից հետո նա հանգիստ չունեիր: Նա ճեմարանում էր, քառաձայն խմբի հետ, սովորեցնում էր ժողովրդական երգերը, որ հավաքել էր ժողովրդից և վերամշակել էր աշխատանքում: Հետ ճաշու այդ աշխատանքները տեղի էին ունենում մեծ մասամբ ճեմարանի դահլիճում, որտեղ գտնվում էր նրա դաշնամուրը: Մենք այդ աշխատանքներին հաճախում էինք եռանդով ու ջերմ սիրով. մեզ գրավում էր Կոմիտասի քնքուշ ձայնը և նրա դյուրօշ երգերի հրապույրն ու թովչությունը:

Դասերն անցնում էին արտակարգ հետաքրքրությամբ: Կոմիտասը բացատրում էր ժողովրդական ու եկեղեցական երգերի ծագումը, բնույթը, նրանց մեջ արտահայտված հայ ժողովրդի աշխատանքը, վիշտն ու ուրախությունը, սերը՝ առ հաշտեմիքը, շեշտում էր այդ երգերի բնությունն հայկական ոգին ու շունչը: Նա ոգեշնչվում էր ժողովրդական երգերով և մեզ վարակում սիրով դեպի ժողովրդական ստեղծագործությունը և դեպի ինքը: Յուրաքանչյուր երգ սովորեցնելուց առաջ նախապես մեզ ծանոթացնում էր այն պայմաններին ու միջավայրին (բնության՝ թե հասարակության), որի մեջ առաջացել է այդ երգը, և ապա երգում էր հոգեմայլ, թովիչ ձայնով, մեզ պատճառում գեղարվեստական

տական անբացատրելի մեծ հաճույք, կրթում ու ազնվացնում մեր ճաշակը և մեր հոգին:

Ուշագրավ են Կոմիտասի դասախոսությունները հայ հոգևոր և պատարագի երգերի մասին: Կենդանի, համոզիչ օրինակներով ցույց էր տալիս, որ մեր հոգևոր երգերի ակունքը, պատարագի ու այլ հոգևոր երգերի անսպակ ու մշտաբույս աղբյուրը ժողովրդական երգերն են, հայ ժողովրդի ստեղծագործությունը: Եվ Կոմիտասը երգում էր՝ «Այգեպան, ի՞նչ ես անում, շամբք բորաստան չի լինի» և ապա պատարագի մի «Տէր, ողորմեա»-ն: Նմանությունը ակնբախ էր և փաստերն ամրակող, անհերքելի:

Նա մեծ մանկավարժ էր և գիտեր գրավել մեզ իր արվեստով: Ներս էր մտնում դասարան, մեղմ ծպիտը դեմքին: Անցյալ դարը հարցնում էր և ապա նորը տալիս: Նա եվրոպական նոտաներով գրում էր գրատպատակին երգը, և մենք արտագրում էինք ու իր հետ երգում գրածը: Հայկական մեղեդիները ձայնագրում էր եվրոպական նոտաներով և դրանցով սովորեցնում մեզ: Կոմիտասը հայկական նոտաները չէր գործածում, չնայած մեզ սովորեցրել էր և՛ հայկականը, և՛ եվրոպականը, բայց մենք գործադրում էինք եվրոպականը, որովհետև այդ էր պահանջում ինքը:

1905 թիվ, հունիս ամիս: Խրիմյան կաթողիկոսը Կոմիտասին իրավունք տվավ մամերգ տալու Թիֆլիսում, Անդրկովկասի կենտրոնական քաղաքում:

Ճեմարանի տեսուչ էր Կարապետ Կոստանյանը, հայտնի բանասեր, ազդեցիկ մի մարդ, որ վայելում էր Խրիմյանի և էջմիածնի միաբանության հարգանքը: Նա շատ բարձր էր գնահատում Կոմիտասի տաղանդը և ոչինչ չէր խնայում մեծ երաժշտին՝ իր ծրագրերի իրացման համար: Թիֆլիս մեկնելուց առաջ Կոստանյանը մեզ կանչեց իր մոտ, խրատեց՝ լինել կարգապահ, ամեն կերպ աշխատել բարձր պահելու ճեմարանի անունը և բարի ճանապարհ մաղթելով մեզ ճանապարհեց Թիֆլիս: Մենք ոտքով գնացինք Կարխուն (այժմ՝ էջմիածին) կայարանը և այնտեղից գնացքով՝ Թիֆլիս: Գնացքում մենք Կոմիտասի հետ էինք: Նա անհանգիստ էր, մտախոհ, մտքերը պաշարել էին նրան, առաջին անգամն էր հոգևորականի համերգը Անդրկովկասի կենտրոնական քաղաքում, մարդաշատ Թիֆլիսում: Նա պառկած էր վագոնի չոր նստարանին ու սուզված իր խոհերի մեջ:

— Հայր սուրբ, բարձ ու վերմակ եմք բերել ձեզ համար. չոր տախտակին անհանգիստ կլինեք, ասում էինք ու խնդրում, որ վերցնի բարձն ու վերմակը:

Որքան սիրելի էր նա մեզ համար և որ-

քա՛ն ցավում էինք տեսնելով նրան այդ վիճակում: Մենք ըմբռնում էինք մեր սիրելի ուսուցչի հոգեվիճակը, բայց չէինք վատահանում ամոքել նրան:

— Չէ, տղանե՛ր,—պատասխանում էր Կոմիտասը,—ոչինչ պետք չէ, գնացեք, հանգստացեք:

րով հետ էր մնացել մեզնից: Գրկախառնվեցին երկու մեծ արվեստագետները, և սկսվեց խանդավառ գրույցը նրանց միջև: Մենք դիտում էինք նրանց գրույցը և լցվում անհուն հրճվանքով:

Հրաժեշտ տալով Սունդուկյանին, մենք շարունակեցինք մեր երթը և հասանք Ղամ-



Կոմիտաս վարդապետը և Հակոբ Մանանդյանը մի խումբ ճեմարանականների հետ

Գիշեր է. գնացքը ստրում է ձորերի միջով, վագոնում լուրջություն է, քնած են բոլորը, արթուն է միայն նա, մտքերը հուզում են նրան, և քուն չի գալիս նրա աչքերին:

Առավոտ է, մենք արդեն Թիֆլիսում ենք և ոտքով գնում ենք դեպի Ղամբարյանների տունը, որը հատկացրած էր մեզ: Չհասած Ղամբարյանների տանը, հեռովից մենք տեսանք Գաբրիել Սունդուկյանին, որը մեզ նկատելով, կանգ էր առել փողոցում և դիտում էր մեզ: Նա, անշուշտ, ապաստում էր մեզ. մենք ուրախությունից թռանք դեպի մեր սիրելի գրողը, ջերմ սեղմեցինք նրա ձեռքը և հարազատորեն գրուցում էինք, երբ հասավ Կոմիտասը, որը մի քանի աշակերտներ-

բարյանների տունը: Դա բազմաթիվ սենյակներից բաղկացած մի վիթխարի շենք էր, որ հարևան էր փոխարքայի պալատին: Սկսվեց հյուրերի այցը մեծ արվեստագետին՝ երգիչներ, երգչուհիներ, գրողներ, հասարակական գործիչներ, հայ, ռուս, վրացի հանգիստ չէին տալիս Կոմիտասին: Այցելուների մեջ մեզ գրավում էր մեկը, ժպտադեմ, կենսախիղ, առույգ ու գեղեցկադեմ մի երիտասարդ: Դա Հովհաննես Թումանյանն էր. գրկախառնվեցին երկուսը, կարծես երկարամյա բացակայությունից առաջին անգամ են հանդիպում իրար մտերիմները:

Թումանյանը միշտ մեզ մոտ էր, Կոմիտաս-

սի հետ, առաւիտ, կեսօր, ուշ երեկո և սպասեալ ամէն օր:

Հասարակ համերգի ժամը: Արտիստական թատրոնը լեւի-լեցուն է: Երգեցիկ խումբը, բաղկացած անարանի աշակերտներից, սրտատրոփ սպասում է վարագույրի բացմանը: Կոմիտասը հուզված է, ժպիտ չկա դեմքին, անթարթ նայում է մեզ, խոսք չունի մեզ ասելու: Նա գլխաբաց է, հոգևորականի պարզ, սև հագուստով: Վարագույրը բացվեց, երևաց խոտներում բազմությունը, թրևից դահլիճը որոտագին ու երկարատև ծափահարություններով: Կոմիտասը դարձավ հանդիսականներին ու գլխի թեթև շարժումով ողջունեց նրանց: Ծափերի թնկունը ավելի սաստկացավ և դադարեց միայն այն ժամանակ, երբ Կոմիտասը ձեռքի մի թեթև ու հանգիստ շարժումով մեր երգն ազդանը շահեց: Մենք սկսեցինք երգել «Էջ Միածինն ի Հօրէ» երգը, որն հայության համար միշտ համագգային հիմն էր: Դահլիճը ոտքի կանգնեց մի մարդու նման մինչև երգի ավարտը: Բուն ու որոտագին ծափահարությունները ոգի ներշնչեցին մեծ արվեստագետին, հուզմունքը անցավ, և մեղմ ու կենտրոնաւ ժպիտը փայլեց նրա մաշված դեմքին:

Համերգը բաժանված էր երկու մասի՝ հոգեվոր և աշխարհիկ երգերի: Համերգի առաջին մասն ավարտվեց անդադրում և որոտագին ծափահարությունների թնկունների տակ: Երկրորդ մասը Կոմիտասի մշակված հայ ժողովրդական աշխարհիկ երգերից էր կազմված: Երգում էին խումբը և մենակատարները՝ Կոմիտասը և իր ասն, ձայնեղ Վահան Տեր-Առաքելյանը: Կոմիտասի «Կոունկ»-ը, «Մոկայ Միրզա»-ն, Տեր-Առաքելյանի «Կունկ առավ», «Սիրտս նման» և այլ երգերը հանդիսականներն ընդունում էին բուն ու երկարատև ծափահարություններով ու «կրկնել» բացականչություններով: Ընդմիջումին ու համերգի ավարտին բեմը լցվում էր հանդիսականներով, որոնք սրբուտագին ողջուններով իրենց գոհունակությունն ու հիացմունքն էին արտահայտում հանձարեղ երգչին: Յնծում էր Կոմիտասը, թախիճը և մտազբաղ լրջությունը տեղի տվին կենտրոնաւ ժպիտներին, որ փայլում էին նրա պայծառ դեմքին:

Ժամանակի մամուլը ջերմ ու արտահույզ հողվածներով դրվատեց մեծ արվեստագետի աշխատանքը, իսկ նրա երգերը դարձան համաժողովրդական սեփականություն:

Այդ համերգը Կոմիտասի առաջին ելույթն էր Անդրկովկասի մայրաքաղաքում: Այն տարածեց Կոմիտասի ստեղծագործական հմայքը բովանդակ Անդրկովկասում և կայսրության քաղաքներում ու գյուղերում:

Կոմիտասը սիրում էր ռուսական երգերը և ռուսական մշակույթը: Նա հետաքրքրվում և ուսումնասիրում էր ռուսական ժողովրդական երգերը, Գիլկևայի, Բորոդինի, Ռիսևի Կորսակովի ստեղծագործությունները: Կոմիտասը ռուսերեն խոսում էր շատ լավ: Նա մեզ սովորեցրել էր ռուս ժողովրդի սիրելի երգը՝ «Вниз по матушке, по Волге», ինչպես և ռուսական այլ երգեր, և հիացմունքով էր խոսում ռուս գրականության և երաժշտության մասին: Դասերի ժամանակ նա հանախ մեզ ներշնչում էր սեր առ ռուս ժողովուրդը և շեշտում, որ մեր գոյությունը պայմանավորված է ռուս ժողովրդով, և առանց ռուսի մենք հայերս փրկություն չունենք: Դա Կոմիտասի քաղաքական հավատալիքն էր, որ ներշնչում էր մեզ:

Կոմիտասը բազմաակր ստեղծագործող է: Նրա ստեղծագործական հիմնական թեման գյուղական աշխատանքը, գյուղն է, որ ծնում է աշխարհիկ երգը և պահպանում ազգային աշխարհիկ երաժշտությունը. «Ազգային աշխարհիկ երաժշտությունը սպրում է հայ գյուղի շնորհիվ», ասում է Կոմիտասը:

«Գութանի երգը», «Բալի երգը», «Երկրագործի երգը», «Բաղնակ» երգերի մեջ դրսևվորվել է հայ գյուղացու աշխատանքը: Միայն հայ գեղունի աշխատանքը չէ ոգեշնչել մեծ արվեստագետին: Հայ աշխատավոր գյուղացու զգացմունքները, նրա տրամադրությունները նույնպես բարձր հուզականությանը արտահայտվել են «Չիհար ես, կենալու մի», «Գարուն ա, ձյուն ա արել», «Քեկեր, ցուկեր», «Ծիրանի ծառ», «Լուսնակն անուշ», «Մեր դուսեր խնկի ծառ» և այլ բազմաթիվ երգերի մեջ: Հայ ժողովրդի տարաբախտ վիճակը հուզել է մեծ արվեստագետին, որ իր խորը վիշտն արտահայտել է հայրենասիրական երգերի մեջ, ինչպիսին են «Կոունկ»-ը, որ մշակել է Կոմիտասը, «Կանչե, կոունկ», «Անունի», «Մոկայ Միրզե», «Տո լան տնավեր» տրամահույզ երգերը:

Բացի աշխարհիկ երգերից Կոմիտասը վերամշակել է նաև բազմաթիվ հոգևոր երգեր, որոնց մեջ հայտնի են «Հաիկ», «Աչքն ծով ի ծով», «Տիրամայր», «Աշխարհ ամենայն» և «Պատարագ», որ կազմում է եկեղեցական երգերի թագն ու պսակը: Քաղաքը հեռու է եղել նրա տեսադաշտից, քաղաքը չի հորինել աշխատանքի երգեր:

Հայ երաժշտությունը շատ բարձր է գնահատել մեծն Կոմիտասը և իր բովանդակ արգասավոր կյանքը անդադրում աշխատանքով, նվիրել ժողովրդական գանձերի հավաքմանը, ուսումնասիրությանը և վերամշակմանը: «Հայ երաժշտությունը,—ասում է Կոմիտասը,—համակ ուժ է և կենդանու-

թյուն, որ իր մեջ կանուցանե փիլիսոփայությունն իսկ, ոգին իսկ իր ցեղին, որովհետև երաժշտությունն ամենեն մաքուր հայելին է ցեղին, ամենեն հարազատն ու կենդանին անոր բոլոր արտահայտությանց մեջ, կենդանի՝ որքան կենդանի է այդ ցեղը, բւժեղ՝ որքան ուժեղ է իրեն ծնունդ տվող ժողովուրդը»:

Կոմիտասին շատ բարձր են գնահատել հայ և աշխարհի ականավոր արվեստագետները:

Հարազատ ժողովուրդը Կոմիտասի արձանը կանգնեցրեց Էջմիածնում: Այդտեղ է հասակ առել և արգասավորվել նրա երաժշտական մեծ հանճարը: Հայ երախտագետ ժողովուրդը Երևանում էլ կանգնեցրեց նրա արձանը նրա անունը կրող, մեծ պողոտայում:

Հարազատ կտավարությունը արժանավայել շքեղությամբ տոնեց նրա 100-ամյա հոբելյանը, որը վերածվեց վեհաշուք փառատունի համաշխարհային չափանիշով:

Կոմիտասն անմահ է: Մեծ հանճարը կարող է հոռմեական բանաստեղծ Հորատիուսի բերանով ասել՝

Կանգնեցրի անմեռ արձան ես ինձ համար
ամրակոտ, քան պղինձն
Ու պալատներն արքայական և բարձրա-
բերձ, քան բուրգերն այն:
Եվ չեն եղծի անձրևը, ոչ Աքվիլիոնը՝
հյուսիսի,

Ոչ անհամար շարանները դարերի:
Ո՛չ, չեմ մեռնի ես լիովին, և լավագույն
մասն իմ կյանքի
Կփրկվի թաղումից և փառաշուք պսակն
իմ

Կըփթթի սոհավետ...

Հավերժական փառք և պատիվ հանճար՝դ
արվեստագետին՝ մեծն Կոմիտասին:

¹ Աքվիլիոնը (Աքվիլոնիուսը) լատինական դիցաբանության մեջ հյուսիսային քամիների անձնավորումն է:

